ֆի լալանկայի, և ընդ մածնոյ խառնեն և առնեն իբրեւ զլոխմայ, և ի դնելն զայն ի բերան տեառն՝ բութ մատամբն փոքր ինչ մղէ ի ներքս ի բերանն։

Եւ ի սմին խրախճանի էր նաեւ Թովմաճան ընդ որդւոյն, զորս մերձ ինքեան նստոյց Թագուհին. և սոքա ըստ սովորութեան մերոյ իւրեանց ձեռօքն ուտէին զկերակուրն և ցորենի հացով, և որոշեալ էր սեղան սոցին ի նոցանէ։ Իսկ այլքն սպասաւորի ձեռօք ուտելովն՝ փառք համարէին ինքեանց և ծիծաղէին ի վերայ Թովմաճանին։ Եւ Թովմաճանն ընդ որդւոյն հանդարտօրէն ուտէր իւր ձեռամբն. և Թագուհին եւս համաձայնեալ ընդ Թովմաճանին՝ սկսան ծիծաղել ի վերայ նոցա։ Եւ յորժամ սեղանն մերձ եղեւ յաւարտել, բերին զհում միս կովու նորոգ մորթեալ՝ իբր մեզէ մրգեղինաց, և սկսան սպասաւորք զխուշպաշի կտրատել և դնել ի բերան տեարցն իւրեանց, և հարցանէին Թովմաճանին թէ դու եւս կամիս ուտել զհում միս։ Իսկ նա տհաճելով և խոժոռելով ոչ միայն ոչ եկեր ինքն, այլ եւս որոց մերձ էին նմա ոչ եթող ուտել ամօթելով։ Եւ ժպտեալ Իթեկէն, յոյժ հաճեցաւ ընդ այն, զի ինքն եւս ոչ ուտէր զհում միս։ Եւ յորժամ իմացաւ Թովմաճանն զհում միս չուտելն Թագուհւոյն, յայնժամ սկսաւ համարձակ ծաղր առնել զնոսա բազմաղիմի կերպիւ և պակասութեամբ, վասն զի և այսր պատճառի այսինքն հում միս ուտելոյ չորս անգամ ի տարւոջ ըմպէին գլուծողական դեղս, ապա թէ ոչ որդունք ի ռնգացն թափէին... Զայս քննեալ և ուսեալ ի Թովմաճանէն բազումք մեծամեծք հրաժարեցան, և այնուհետեւ ոչ ուտէին զհում միսն։ Եւ երբեմն ի յոմանս տունս որք ուտէին՝ ընդ գնալ Թովմաճանին անդր, իսկոյն ամբարձեալ զհում միսն ընդ սեղանովն դնէին, զի մի ծաղր լիցուք Թովմաճանին՝ ասէին։

Եւ ասէն դիցուք զպատճառն հում միս ուտելոյ նոցա թէ ուստի՛ իցէ յառաջացեալ պատմեսցուք. այլ եւս զկերպն սեղանոյ հացին։

Այս կեսնտէր քաղաքն հապէշ թագաւորի (նախ քան զ225 տարի, որ է 1540 թուին) ունէին զբազում մահմետական ստրուկս. և ի մէջ քաղաքի խառնեալ ընդ նոսա բնակէին. և այս մահմետականք ի մէջ իւրեանց խորհեալ են թէ՝ Եկայք յարուցուք զխռովութիւն ինչ և տիրապետեսցուք քաղաքիս և զընդդիմողսն կոտրեսցուք. և այսու խորհրդով յանկարծակի յաւուր միում յարուցեալ սկսան պատերազմիլ և ի փախուստ դարձուցանել զհապէշսն, և զբազումս խողխողեալ դիաթաւալ կացուցանէին և փախստեայս լինէին ի ծերպս և ի քարանձաւս ի մեծ ահէ և յերկիւղէ մահմետականացն ի գիշերի և ի տուընջեան, զի ոչ կարէին լուցանել զհուր առ ի պէտս կերակրոյ. վասն զի ի տուընջեան ի ծխոյն, և ի գիշերի ի լուսոյ հրոյն երկնչէին. զի ի տեսանելն տաճկաց զծուխս կամ զլոյսն հրոյ՝ յուզի անկեալ գնացեալ սպանանէին։ Ուստի և այս փախստական հապէշք սկսան զմիան հում հում ուտել, և ահա յայսմ պատճառէ մնացեալ է հում միս ուտելն հապէշին, որպէս ինքեանք խոստովանեցան։

Արդ իբրեւ հեռացան հապէշքն, ազգ արաբեալ միմեանց ժողովեցան ի միում տեղւոջ, խորհեցան բառնալ զմահմետականսն այսու կերպիւ. և ընտրեցին ի մէջ իւրեանց զ20 արս խոհեմս առաքել ի Հռոմ առ Պապն և նորա միջնորդութեամբ առ թագաւորն Բորթուկիզու. և ի նմանէ եղիցի մեզ օգնութիւն ստանալոյ զթագաւորութիւնն մեր, զի նա ի կողմանէ Միւսէմպիկի սահմանակից մեր է այն։ Եւ առ այս խորհուրդ հաճեցան ամենեքեան և եռուն նոցա գանձս բաւականս և առաքեցին զ20 արսն զայնոսիկ ի Հռոմ առ Սրբազան Պապն Գրիգոր ԺԳ. (1549) և եռուն նմա զնամակս ազետից իւրեանց՝ որ էր այսու օրինակաւ. «Մեք ուղղափառ Հապէշի քրիստոնեայքս որ ի յԱֆրիկա, ունեաք զբազում մահմետական ստրուկք այսինքն ռայէք, սոքա ապստամբեալ սպանին զբազումս ի մեզ և տիրեցին զբազաւորանիստ քաղաքն մեր զկեսնտեր. և խնդրեմք